# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

**<< ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՓԾ/2025/L-14 >> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**Ք.Երևան**

**« 09».01.2025թ.**
**ժամը 12:00**

**ՕՐԱԿԱՐԳ.**

ՀՀ ՆԳՆ կարիքների համար **հանդերձանքի և պարագաների** /լրակազմ/ <u>/CPV 35811160/503/</u> ձեռքբերման նպատակով հայտարարված **ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՓԾ/2025/L-14** ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած և նվազագույն գին առաջարկած մասնակից **«Թրեյդ Հաուզ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացրած հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ <u>էլեկտրոնային աճուրդում «ապրանքի ամբողջական նկարագիր» դաշտում</u> **«Թրեյդ Հաուզ» ՍՊԸ** կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի Հավելվածը ներկայացված է **<u>ոչ ամբողջական</u>**, որն ընդունելի չէ և ենթակա է շտկման, ինչպես նաև տեխնիկական բնութագրում նշվում է, որ մատակարարի կողմից տրամադրվում է որակի սերտիֆիկատ, սակայն այնտեղ նշված չեն հետևյալ բաղադրիչները.

1.**Մարտական հանդերձանք (Հրշեջների մարտական հագուստ, հրդեհակայուն)** - Մատակարարը տրամադրում է արտադրանքի նմուշ և արտադրողի կողմից տրված որակի հավաստագիր (սերտիֆիկատ), որտեղ նշված է նաև.

1) մակերեսային նյութի բաղադրությունը և քաշը:
2) Եթե կան ծնկների բարձիկներ, նյութի բաղադրությունը և ջերմակայունությունը:
3) Բաճկոնի մանժետների նյութի բաղադրությունը և ջերմակայունությունը:
4) Լուսանդրադարձնող ժապավենների բաղադրությունը և ջերմակայունությունը:
5) Xf2 - բոցի ջերմափոխանակում, ըստ ստանդարտ փորձարկման մեթոդի EN 367,
EN 6942 ստանդարտի փորձարկման մեթոդի համաձայն ջերմային ճառագայթման փորձարկման ժամանակ:
7) Y2 - ջրակայունություն՝ համաձայն ստանդարտ փորձարկման մեթոդի EN 20811:
8) 22 - օդաթափանցելիություն - դիմադրություն ջրի գոլորշիներին, ըստ ստանդարտ փորձարկման մեթոդի EN 31092:

**2.Ձեռնոցներ (Հրշեջների ձեռնոցներ, հրդեհակայուն)**-_Մատակարարը տրամադրում է արտադրանքի նմուշ և արտադրողի կողմից տրված որակի հավաստագիր (սերտիֆիկատ), որտեղ նշված է նաև.

1. Մակերևութային հյուսվածքի բաղադրությունը եւ հյուսվածքի բաղադրությունը ափի վրա:
2. Աստառի բաղադրությունը:
3. Հագնվելու դիմադրություն, ծակման դիմադրություն, պատռվածքի դիմադրություն՝ համաձայն EN388-ի:

Պետք է համապատասխանի EN ISO 21420:2020-Protective gloves harmonise standard (5-րդ դասի ճկունություն) և EN 659:2003+A1:2008+AC2009-Protective gloves for firefighters ստանդարտներին:

4. Ձեռնոցի ջերմաստիճանի դիմադրությունը առնվազն 300°C է:

**3.Կիսաճտքավոր կոշիկներ (Հրշեջների ճտքավոր կոշիկներ)-** Մատակարարը տրամադրում է արտադրանքի նմուշ և արտադրողի կողմից տրված որակի հավաստագիր (սերտիֆիկատ), որտեղ նշված է նաև.

1) HI - մեկուսացում բարձր ջերմաստիճանից (ըստ EN ISO 20345):
2) դիմադրություն աղեղի հարվածներին (ըստ EN ISO 20345-ի):
3) P - ներբանի ծակումների դիմադրություն (ըստ EN ISO 20345-ի):
4) WR - անջրանցիկ (ըստ EN ISO 20345):
5) FO - դիմադրություն նավթամթերքներին (ըստ EN ISO 20345):

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ՝**

Կասեցնել **ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՓԾ/2025/L-14** ծածկագրով գնման ընթացակարգի նիստը **1 /մեկ/ աշխատանքային օրով** և «Թրեյդ Հաուզ» ՍՊԸ-ին <u>առաջարկել կատարելու վերը նշված անհամապատասխանությունների շտկումները:</u>

***Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.***

Հանձնաժողովի հաջորդ նիստը կկայանա կասեցված 1 աշխատանքային օրը ավարտվելուն հաջորդող աշխատանքային օրը /13.01.2025թ. ժամը 12:00/, ք. Երևան Նալբանդյան 130 հասցեում:

**Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0:**

***Հանձնաժողովի <u>Նախագահ</u>՝***
ՀՀ ՆԳՆ ՓԾ տնօրենի տեղակալ, փ/ծ գնդապետ **Տ. Պետրոսյան**

***<u>Հանձնաժողովի անդամներ</u>՝***
ՀՀ ՆԳՆ ՓԾ ՓՈՒՎ պետի պժկ, փ/ծ գնդապետ **Բ. Վարդազարյան**

ՀՀ ՆԳՆ ՓԾ ՓՈՒՎ հևփ աշխատանքների կազմակերպման բաժնի ավագ հրահանգիչ, փ/ծ փոխգնդապետ **Հ. Սիմոնյան**

***Քարտուղար՝***
ՀՀ ՆԳՆ ՏՎ ԳՀ բաժնի գլխավոր մասնագետ **Լ. Սահակյան**